ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 03 2022թ.
№ ԿԵՄ/Հ-372

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Գասպարյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31
ՀՎՀՀ 00873228
էլ. հասցե՝ tender@garaj.am
հեռ. 055-46-54-56

Հայտնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի և ՀՀ պաշտպանության նախարարության և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքված N ԳՀԾՁԲ-22-4/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13-րդ կետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. մարտի 16-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը, քանի որ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում համաձայնագիրը «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից չի ստորագրվել և տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները չեն փոխարինվել երաշխիքով կամ կանխիկ փողով:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 6 000 000 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին փոխանցել 9 000 000 ՀՀ դրամ՝ որպես որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am